# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4

**ՀՀԿԳՄՍՆԲՄԱՊՁԲ-20/1 ծածկագրով բաց մրցույթով սպորտային հագուստ, կոշիկ և այլ պարագաների գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի**

**Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 09.01.2020թ. ժամը 11:00-ին էլեկտրոնային գնումների www.armeps.am կայքի միջոցով:**

**Մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Թամրազյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Կարապետյան /գնահատող/

Ա. Ղազարյան /գնահատող/

Լ. Վարդանյան /բացող/

Ս. Ղազարյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մարգարյան

**1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.**

1.1 ՀՀԿԳՄՍՆԲՄԱՊՁԲ-20/1 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

**2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

2.1 ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված ՀՀԿԳՄՍՆԲՄԱՊՁԲ-20/1 ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները | Էլ. հասցեները |
|---|---|---|
| 1 | <<Լուառ>> ՍՊԸ | kananyan0102@mail.ru |

**3. Տվյալներ հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

3.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

**4. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

4.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

**5. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին**

5.1 Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես հայտի հավելված 1.1 առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում սպորտային շապիկի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պայմաններին:

**6. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.**

6.1 Մասնակիցը ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը.

| Չափաբաժին | Նախահաշվային գինը, ՀՀ դրամ | Մասնակցի անվանումը | |
|---|---|---|---|
| | | <<Լուառ>> ՍՊԸ | |
| | | Առաջարկված գինը, ՀՀ դրամ | |
| | | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ |
| 1 | 81480000 | 79300000 | 79300000 |

**7. Գնահատման գործընթացի կասեցման և բանակցությունների կազմակերպման վերաբերյալ.**

7.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.17թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված ''Գնումների գործընթացի կազմակերպման'' կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ կասեցնել գնահատման գործընթացը առաջարկելով <<Լուառ>> ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել 5-րդ կետով արձանագրված անհամապատասխանությունը և միաժամանակ հրավիրել հայտով ներկայացված գնի նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների ս.թ. հունվարի 13-ին ժամը 10:00-ին, ք. Երևան, Կառավարական տուն 2, 308 սենյակ հասցեում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 13.01.2020թ. ժամը 10:00-ին**

**Մասնակցում էին՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Թամրազյան /գնահատող/

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Կարապետյան /գնահատող/

Ա. Ղազարյան /գնահատող/

Լ. Վարդանյան /բացող/

Ս. Ղազարյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մարգարյան

<<Լուառ>> ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Քնարիկ Քանանյան

**8. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին**

8.1 <<Լուառ>>ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները:

**9. Գնման գործընթացին հայտ ներկայացրած մասնակցի հետ միաժամանակյա բանակացությունների վարման մասին**

9.1 Հայտով առաջարկված գների նվազեցման նպատակով կազմակերպել բանակցություն սահմանելով 5 րոպե տևողությամբ ժամանակ:

9.2 Միաժամանակյա բանակացությունների վարման համար սահմանված ժամանակահատվածի ավարտին <<Լուառ>> ՍՊԸ-ի կողմից գնի վերաբերյալ նոր առաջարկ չի եղել /հիմք՝ հավելված 1/:

**Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:**

**10. Գնահատման արդյունքների մասին**

10.1 Հիմք ընդունելով հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները <<Լուառ>> ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար և հայտարարել ընտրված մասնակից:

10.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հիմք ընդունելով ''Գնումների մասին'' ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը՝ առանց անգործության ժամկետ սահմանելու, ընտրված մասնակցին, էլեկտրոնային ձևով գնումների կազմակերպման կարգին համապատասխան՝ ARMEPS համակարգով, ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:***

**Գնահատող հանձնաժողով՝**

_____ Գ. Թամրազյան /նախագահ/

_____ Ա. Կարապետյան

_____ Ա. Ղազարյան

_____ Լ. Վարդանյան

_____ Ս. Ղազարյան

_____ Ա. Մարգարյան /քարտուղար/

**Հավելված 1**
ՀՀՀԿԳՄՄՆԲՄԱՊՁԲ-20/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության

## Բանակցությունների արդյունքում առաջարկված գները

| Չափաբաժին | Ապրանքի անվանումը | Նախահաշվային գինը | <<Լուառ>> ՍՊԸ | |
|---|---|---|---|---|
| | | | Առաջարկված գինը, ՀՀ դրամ | |
| | | | առանց ԱԱՀ | ներառյալ ԱԱՀ |
| 1 | Սպորտային հագուստ, կոշիկ և այլ պարագաներ | **81 480 000** | **79 300 000** | **79 300 000** |
| Բանակցությունների ավարտին առաջարկված գները | | | **79 300 000** | **79 300 000** |

**<<Լուառ>> ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝**

_____ **Քնարիկ Քանանյան**

13.01.2020թ